

ՆԱ ԻՐ ԳՈՐԾՈՎ ՄԻՇՏ ԿԱՊՐԻ ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՄ



Մեզնից յուրաքանչյուրն ունի երազանքներ, սիրելի հերոսներ, որոնց ցանկանում ենք նմանվել արարքներով, բնավորությամբ ու գործունեությամբ: Սակայն ժամանակը ստիպում է, որպեսզի մենք փոխենք մեր աշխարհայացքը, ինչպես նաև մեր հերոսներից:

44 -օրյա պատերազմը ինձ և շատերին նույնպես ստիպեց փոխել մեր հերոսներին: Այլևս իմ հերոսը ֆիլմից կամ պատմվածքից չէ, այլ իրական, ով իր գործունեությամբ մեծ դեր խաղաց մեր իսկ ապրելու հարցում:

Հերոս Շուրա Սուրենի Մարկոսյանը ծնվել է 1998 թվականի ապրիլի 9-ին Մարտակերտի շրջանի Թբիլու գյուղում: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 2016թ. հուլիսի 11-ին զորակոչվել է բանակ՝ ժամկետային զինվորական ծառայության անցնելով Մարտունու զորամասում, այնուհետև շարունակել է ծառայել հայրենիքին որպես պայմանագրային զին-ծառայող՝ սերժանտի կոչումով:

Սեպտեմբերի 26-ին Շուրան դիրքերից մի քանի

օրով վերադարձել էր տուն, կնոջ՝ Լիլիթի և իր նորածին որդուց կարոտն առնելու: Դեռ կարոտը չառած՝ սեպտեմբերի 27-ին վաղ առավոտյան արևի պայթյունից վեր թռավ՝ հասկանալով, թե ինչ է կատարվում, իսկույն հագավ զինվորական համազգեստը և շտապեց տնից դուրս գալ: Վախեցած Լիլիթը գրկեց նորածին որդուն, կանգնեց ամուսնու առջև՝ ասելով.

- Շուր, մի՛ գնա:

-Ես չեմ կարող զինվորական հագուստ կրելով հանդերձ՝ թաքնվել տանը,-ասաց Շուրան՝ համբուրելով կնոջը և որդուն ու հեռացավ տնից:

Այդ օրն էլ սկսվեց չարաբաստիկ պատերազմը: Հենց առաջին օրվանից Շուրան առաջնագծում էր՝ մասնակցելով թե՛ մարտերի: Հոկտեմբերի 10-ին՝ թշնամու լայնածավալ հարձակումների ժամանակ Շուրան մահացու վիրավորում է ստանում... անշնչացած մարմինը դուրս են բերում մի քանի ամիս անց: 2021թ.-ի փետրվարի 10-ին՝ Շուրայի մոր ծննդյան օրը, բերում են տղայի մասունքները:

Մեր ժպտերես Շուրիկի վերադարձին սպասում էինք բոլորս, սակայն պատերազմն իր դաժան հետքը թողեց մեր սրտերում, Շուրան չեկավ, նրան բերեցին: Շուրայի հայրենամներ գործը միշտ կմնա մեր հուշերում: Հայրենիքին մատուցած ծառայությունների և ցուցաբերած խիզախության համար հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Նրա հիշատակին բացվել է աղբյուր-խաչքար՝ Քուլատակ - Թբիլու գյուղեր տանող ճանապարհի միջնամասում: Խաչքարի մոտ միշտ թարմ ծաղիկներն անպակաս են: Նրա անունն ու հիշատակը մենք միշտ վառ կպահենք: Երբեք բացակա չենք դնի մեր քաջ հերոսին: Իմ հերոսը կա՛, նա ապրում է մեր բոլորի հոգիներում:

Ալիսա ԱՂԱՍՅԱՆ

Լրագրություն 2-րդ կուրս



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱԶՅԱՆ
Համարի պատասխանատու՝
Համեստ Մկրտչյան,
լրագրություն 4-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը: **ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ**

Քո ժամանակը

№ 7
ՀՈԿՏԵՄԲԵՐ
2021

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԿԱՅԱՑՎԵՑ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

Հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱՍԿ) Հավատարմագրման հանձնաժողովի նիստ: Օրակարգում Արցախի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրումն էր:

Հավատարմագրման հանձնաժողովը քննարկեց փորձագետների զեկույցները հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ, դիտարկեց դրական և բացասական գնահատված տիրույթները, փորձագետների մատնանշած ուժեղ և թույլ կողմերը, հնարավոր ռիսկերը: Քննարկվեց նաև, թե որքանով են իրատեսական բուհի բարելավման ծրագրերը:



րը: Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ՝ Արցախի պետական համալսարանին շնորհվեց ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԱՐՊՅ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻ ԱՐԵՎԻԿ ՍԱՅԻՅԱՆԻ «ԵՐԿՐԻ ԱՐԵՎԸ» ԳԻՐՔԸ




Լույս է տեսել ԱրՊՅ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՆԶՊ 2-րդ կուրսի ուսանողուհի Արևիկ Սայիյանի «Երկրի արևը» խորագրով գիրքը: Գիրքը հեղինակի նվիրական զգացումների ամբողջությունն է՝ ծնված ցավից, կորստից և սպասումից: Բանաստեղծություն-խոստովանությունների հասցեատերերը նահատակ տղաներն են: Ամեն տող սպասումի հույս է: Ներկայացնում ենք նրա ստեղծագործություններից մի քանիսը.

Դու գնացիր...
Էլ չես գալու...
Ա՛խ, երանի գեթ մեկ անգամ
Տեսնեմ պատկերդ անմահ,
Լսեմ ձայնդ ուրախ, զվարթ
Ու հայացքդ տեսնեմ հանդարտ:
Հավերժ ծուլվել ես մայր հողին
Չես կարող գալ,
Ա՛խ, այդ բառը, որ մտել է հոգուս խորքը
Ու փորձում է սրտիս հաղթել...
Ասում եմ, որ չկա՛ս, չե՛ս գա,
Իսկ ես գիտեմ, թեկուզ երագ,
Բայց դու մի օր հաստատ կգաս:

ԵՐԿԻՆՔԸ ԽԼԵՑ ԱՐԵՒՆԵՐԻՆ
Հագարավոր արևներ ունենք
հիմա մենք երկնքում,
Թեև մեկ արևն էլ բավական էր,
Երկիրը արևների պակաս ունի
ես ուղարկիր մեր արևներին, երկիրն ք:

ՈՒ՞ր եք, ՏՂԵ՛ՐՔ
Երկնքից արյուն է ծորում,
Ու՞ր եք, տղե՛րք,
Չկաք դուք:
Աչքերիցս արյուն է ծորում,
Չկաք տղե՛րք,
Չեք գալու:
Սրտիցս արյուն է հոսում,
Չկամ, տղե՛րք,
Չեմ շնչում:
Ազգս արյունի մեջ է լողում,
Ու՞ր եք, տղե՛րք,
Չե՞ք գալու:
Արյան ծովում
կխեղդվե՞մք:

Կգամ տղերքը կգամ,
Նոր արծիվներ
կծնվեն:
Արևիկ ՍԱՅԻՅԱՆ
ՆԶՊ 2-րդ կուրս



ԹԵԿՈՒՋ ԱՅՐՎԱԾ, ԹԵԿՈՒՋ ՔԱՆԴՎԱԾ ԵՍ ԻՄ ՏՈՒՆՆ ԵՄ ՈՒՋՈՒՄ ԴԱՌՆԱԼ

Նա Նիկոլայ Չաքմազյանն է : Ծնվել է 2001 թվականի նոյեմբերի 17-ին Հաղորութի շրջանի Սեծ Թաղեր գյուղում: Կրթությունը ստացել է մարշալ Արմենակ Խանգեղյանցի անվան միջնակարգ դպրոցում: Դպրոցի ակտիվ սաներից էր:

Տոն օրերին հայրենի սարերում տարածվում էր Նիկոլայի երգի դողանքները: «Հայոց բանակի հաղթական, մնա միշտ կանգուն, Որդիներով առնական հաղթեմք թշնամուն...»:

Ինտելեկտուալ, սպորտային թե երաժշտական մրցույթներում Նիկոլայի անունն առաջինն էին գրում՝ առանց նրա կարծիքը հարցնելու: «Եթե թու անմո կիրիմ վեչ, պա հուրմն կիրիլան»,- ամենամանավա հնչող պատասխան էր:

-Երբ Կոլիկը մրցույթներին մեզ հետ էր լինում, մենք դրանից արդեն ոգեշնչվում էինք: Եթե անգամ չհաղթեինք, այնպես կաներ, որ հաղթողի տրամադրությամբ վերադառնայինք: Մի քանի օր իր կատակների ազդեցության տակ էինք ու հրճված դեմքով պատմում մյուսներին,- դասընկերն է հիշում:

Նիկոլայը հայոց բանակի շարքերը համալրել է 2020 թվականի հունվարի 8-ին: Պաշտպանում էր Արցախի հարավ-արևելյան սահմանը: Ընդամենը 10 ամսվա զինծառայող էր, երբ ճաշակեց պատերազմն ու զգաց ոտքերի տակ դողողացող հողը: Սեպտեմբերի 27-ի առավոտյան Նիկոլայը հերթապահության էր, դիտակետում էր ստուգում, երբ առաջին անօդաչուն «հյուր» եկավ, հետո երկրորդն ու մյուսները:

-Երբ լսեցի անօդաչուների ձայնը, ուզում էի կապի դուրս գալ, բայց երկրորդ պտույտի ժամանակ անօդաչուն ընկավ դիտակետի վրա: Իրենք տանկերով էին, մենք ավտոմատով,- ասում է Նիկոլայը:

Ձիւնընկերներից Կարեն Բալայանը պատմում է, որ փամփուռները վերջացել էին ու ստիպված էին նահանջել: Դիտակետից դուրս նկատեցին Նիկոլայի բացակայությունն ու ետ դարձան խրամատ:

- Մի քանի հոգով հետ վազեցինք ու տեսանք Կոլայան խրամատում մենակ կանգնած ա՛ հրաժեշտի նամակը մի ձեռքում, նոսրացրել էլ մյուսում: Սպասում էր՝ թշնամին մտնի դիտակետ կոլցոն հանի: Լավ է՝ ժամանակին էինք հասել:

Երբ խրամատում մենակ էր մնացել, մի պահ մտովի անցել էր հայրենի գյուղի տուն տանող ճանապարհով, պոկել հարևանի խնձորենուց, իջել աղբյուրի մոտ ու տուն հասնելով գրկել ծնողներին, հրաժեշտ տվել սիրելիին, Նիկոլայն է կիսվում վայրկենական պատկերացումներով:

-Էնքան էին մոտեցել, որ կրակելուց պարկուճը ընկնում էր մոտս: Արդեն գրանատը ուզում էի քաշել, երբ լսեցի դասակի հրամանատարի ձայնը: Դիրքից որ կանչեց, գետնից հելա՛ մատս դեռ կոլցոյի մեջ ու վազեցի իրենց ուղղությամբ: Նրանք



ինձ համոզում էին դուրս գալ խրամատից: Մի քանի օրից նույն վայրում էինք: Հարձակվեցինք ու գրավեցինք իրենց դիրքը:

Նիկոլայի խոսքով թշնամուն առաջ մղող ուժը ոչ թե հայրենիքի փրկության գաղափարն էր, այլ ուժեղ դեղերի ազդեցությունը: Երբ իրենց խրամատում էին, քարտեզ, դեղերի սրվակ ու դրոշ էին գտել:

-Հայրս արցախյան առաջին պատերազմի ակտիվ մասնակիցներից էր և դպրոցի զինվեցի: Երբ հավաքվում էինք, սկսում էր պատերազմից պատմել, մենք էլ ծիծաղում էինք, մտածում՝ ֆիլմ է պատմում: Երբ մի քանի կիլոմետր հեռավորության վրա թշնամուն տեսա, հայրենիքս կորցնելու վախը գիտակցեցի, հորս պատմած «ֆիլմը» իրականություն էր դարձել:

Նիկոլայը պատերազմի ընթացքում «ճամփորդություն» էր ունեցել Արցախի տարածքում՝ Ջաբրախիլից Հաղորութ, Հաղորութից ճարտար, Մարտունի ու նորից Հաղորութ էր գնացել: Վերջին անգամ Հաղորութի դիրքի պաշտպանության ժամանակ էլ մեկ շաբաթ շրջափակման մեջ էր հայտնվել:

-Մենք քարտեզ էինք գծում, հնարավոր ու անհնար ելքերը քննարկում: Մեկ շաբաթից հաջող դուրս եկանք շրջափակումից ու տեղափոխվեցինք համեմատաբար ապահով դիրք,-պատմում է գրուցակիցս:

Քույրը՝ Ժուլյան, սպասումի օրեր է անվանել այդ շաբաթը, որը անցել է՝ հեռախոսը ձեռքին, ականջն էլ՝ եղբոր ձայնին կարոտ:

-Մենք տեղեկություն չունեինք Կոլիկից: Մինչև կապվեցինք հետը, կես մարդ էինք դարձել: Անհանգստացած, մի քիչ էլ բարկացած տոնով հարցնում են՝ «Ինչո՞ւ չէիր գնալ», ինքը հանգիստ տոնով պատասխանում է՝ «Ժուլ, անհանգստանալու բան չկար, մի քանի օրով շրջափակման մեջ էինք, հիմա սաղ լավ ա,-մեզ ուրախացնելու համար էլ ոգևորված ասում է,- համ էլ՝ «Արիության մեղալ»-ի համար իմ անունն էլ են գրել»: Հայրենասիրությունը մայրական կաթով էր փոխանցվել հերոսին: Պատերազմի անսպասելի հանգուցալուծումը կտրեց նրա պայքարող ոգին, բայց հույսը՝ նորից հայրենի տուն տանող, վիրակապում է սերժանտի՝ դեռ չսպիացող վերքն ու պատրաստում հաղթական վերադարձին:

-Թեկուզ այրված, թեկուզ քանդված ես իմ տունն են ուզում դառնալ

ԱՆԻ ԱՐԱՂՅԱՆ
Լրագրություն 2-րդ կուրս

ՆԱ ՄԵՋ ՍՈՎՈՐԵՑՐԵՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԾՇՄԱՐԻՏ ԲԱՆԱԶԵՎԸ



Պատերազմը սահմաններ չունի, իսկ հայրենիքը՝ սահմանված չէ: Հայրենիքը սրբություն է, որի համար ամենաբանկ զոհաբերությունը կյանքն է:

Հայրենիքի համար իրենց կյանքը զոհած քաջորդիներից է Արման Աղաբաբյանը: Նա մեկն է այն եզակիներից, ովքեր կռվեցին մինչև վերջ՝ հստակ իմանալով ինչի և ում համար:

Ազնիվ, ընկերասեր, խիզախ, համեստ, մեծ կամքի տեր... այսպիսի ամենավսեմ հատկանիշներով են Արմանին բնութագրում ճանաչողները:

Արման Աղաբաբյանը ծնվել է 2001թ. ապրիլի 27-ին Ստեփանակերտում: Փոքր տարիքից փայլուն շախմատ էր խաղում: Նաև տիրապետում էր ուշու մարզաձևին: Ունի շատ պատվոգրեր և գովասանագրեր, որոնք ստացել է՝ մասնակցելով ուշուի տարբեր առաջնություններին:

Արմանը ավարտել է Ստեփանակերտի 11-րդ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանը՝ «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտությամբ:

2019թ. հուլիսի 9-ին համալրել է պաշտպանության բանակի շարքերը: Ծառայության առաջին օրերից աչքի է ընկել որպես խելացի ու պարտաճանաչ զինվոր: ՀՀ-ում դասընթացներ անցնելուց հետո ստացել է կրտսեր սերժանտի կոչում:

Տեսնելով Արմանի նվիրվածությունը և պատասխանատու կեցվածքը, հաշվի առնելով զինվորների հարգանքը նրա հանդեպ՝ հրամանատարության կողմից նրան շնորհվում է սերժանտի, այնուհետև՝ ավագ սերժանտի կոչում: 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսած պատերազմի հենց առաջին օրերից Արմանը մասնակցել է մարտական գործողություններին:

րին: Նա փայլուն կերպով կատարում էր այնպիսի մարտական առաջադրանքներ, որոնք զարմացնում ու հիացնում էին հրամանատարներին և ընկերներին: Վտանգի ենթարկելով իր կյանքը՝ նա փրկում է մի շարք վիրավոր զինակիցների կյանքեր՝ նրանց դուրս բերելով վտանգավոր տեղերից:

Արմանի վերջին մարտը Լյուլիսագ կոչվող բարձունքում էր: Անհավասար մարտում նա վիրավորվում է: Դիրքում երեք հոգի էին: Երբ զինակիցը ցանկանում է դուրս բերել նրան, ասում է. «Թողեք ու գնացեք»: Կյանքի վերջին ժամերին էլ նա չի կորցնում սրտացավությունն ու հոգատարությունը ընկերների նկատմամբ՝ չցանկանալով, որ իրեն դուրս բերելու պատճառով ուրիշ մեկը տուժեր... Դիրքում մնում է մենակ, միայն առավոտյան է հաջողվում դուրս բերել մարմինը, իսկ հոգին արդեն Աստծո լուսավոր ճանապարհն էր բռնել: Մի ճանապարհ, որով քայլում են ամենահերոսները...

Հոկտեմբերի 24-ին մարտում է Աղաբաբյանների տան միակ ճրագը, բայց նա շարունակում է ապրել՝ որպես Լյուլիսագի բարձունքի այն արծիվը, որի թռիչքը չի ավարտվելու: Հերոսների երանը ամեն լուսաբացի բարձունքից վեր է բարձրանում և թռչում է երկնքում՝ սպասելով ազատ ու անկախ Արցախի այն լուսավոր օրվան, հանուն որի գնացին անվերադարձ...

«Երբ Արմանը ծնվեց, նրա ճակատին խաչ կար, որը երեխայի մեծանալով անհետացավ: Ստածում էինք՝ Աստծո կողմից է ուղարկվել և երկար կյանք կունենա: Չէինք պատկերացնում, որ այսպես կլինի»,- պատմում է Արմանի մայրը:

«Շատ փոքր էր, երբ միասին եկեղեցի գնացինք: Երկար աղոթեց: Հետո, երբ հարցրեցի, թե ինչ էր խնդրում Աստծուց, լռեց, ասաց՝ եթե ասեմ, չի իրականանա: Հետո համոզեցի նրան և պատմեց: Նա Աստծուց խնդրում էր, որ իրեն 4 զավակ պարգևի՝ 2 աղջիկ, 2 տղա: Նա տան միմուճարն էր, և ուզում էր, որ իր ապագա երեխաները և՛ եղբայր ունենան, և՛ քույր»,- հավելում է Արմանի մորաքրոջ աղջիկը:

Արմանը և արմանները մեզ սովորեցրին հայրենիքի եւ հայրենասիրության ճշմարիտ բանաձևը: Նրանք կապրեն այնքան, որքան կենդանի է մեր հիշողությունը: Մենք պարտավոր ենք ապրեցնել նրանց:

ԱՆՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Լրագրություն 2-րդ կուրս